Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1189[6]-13.11.2025-ԱռՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտությունը իրականացնում է պետությունն՝ առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Թմրամոլությամբ հիվանդները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում են պացիենտների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում ապահովագրված անձանց իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման, ներառյալ առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխան:

7. Պետությունն առողջության պահպանման և բարելավման ծրագրերի, այդ թվում «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի կարգավորումների հիման վրա թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-**1189**[6]-13.11.2025-ԱՌՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտությունը իրականացվում է պետությունն՝ առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում: ~~առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում~~:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Թմրամոլությամբ հիվանդները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում են պացիենտների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում ապահովագրված անձանց իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման, ներառյալ առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխան:

7. Պետությունն առողջության պահպանման և բարելավման ծրագրերի, այդ թվում «Ա~~ա~~ռողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի

կարգավորումների շրջանակում հիման վրա թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում:»:

~~**Հոդված 3.** Օրենքի 50-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«Հոդված 50.Թմրամոլությամբ հիվանդների բժշկական դիտարկումը և հաշվառումը»~~

~~1. Թմրամոլությամբ հիվանդների բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:~~

Հոդված 34 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~, բացառությամբ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի՝~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
(Կ-1189-13.11.2025-ԱՌՀ-011/0) ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցող)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը
1.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** հստակեցնել նախագծի 3-րդ հոդվածով սահմանված «գույքային շահ» հասկացությունը:	Նկատի ունենալով, որ գույքային շահ հասկացությունը սահմանված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և դրա սպառիչ սահմանում առկա չէ նաև ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերում և դրա իրավական բովանդակության սահմանումը պայմանավորված է ոչ միայն նորմատիվային, այլ իրավակիրառ պրակտիկայով նպատակահարմար չի համարվում այն սահմանել նախագծում:	**Ընդունվել է:**
2.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** հստակեցնել նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ մասում «լրացուցիչ ծառայություններից օգտվելը, միայն **որոշակի** կարգավիճակ ունենալու ընթացքում» դրույթը, որպես օրենքի դրույթ բացել «**որոշակի** կարգավիճակ» հասկացությունը: Ենթադրաբար, այդ կարգավիճակներն են հաշմանդամություն ունենալու, հղի լինելու, փախստականի և օտարերկրացի լինելու կարգավիճակները:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում սահմանվել են համապատասխն սահմանումներ: Խմբագրվել են նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացողների վիճակի կամ կարգավիճակի կապված ձևակերպումները:	**Ընդունվել է:**
3.	Հռիփսիմե Հունանյան	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** հաստակեցնել նախագծի 5-րդ հոդվածի 11-րդ մասում «հերթագրման ժամկետը լրանալու դեպքում ապահովագրված անձն իրավունք ունի դիմելու Հիմնադրամի հետ	Օրենքի նախագծով նման հնարավորության սահմանումը	**Ընդունվել է:**

	ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ		պայմանագիր չկնքած բժշկական կազմակերպություն» դրույթը: Արդյոք՞ դա չի բերի նրան, որ ԲԿ-ների համար ավելի գերադասելի կլինի Հիմնադրամի հետ պայմանագիր չկնքելու վիճակն ունենալը: Բացի դրանից, հնարավոր է՞ առաջանան դեպքեր, երբ պացիենտը կդիմի բժշկական ծառայություն ստանալու համապատասխան լիցենզիա չունեցող բժշկական կազմակերպությանը:	ապահովագրված անձի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի երաշխավորմանն է ուղղված, այն չի կարող հանգեցնել համապատասխան պայմանագրեր չկնքելուն, քանի որ ապահովագրված անձանց սպասարկումը պայմանագրերի շրջանակում միշտ էլ ավելի մեծ ծավալներ է ենթադրելու, քան առանց համապատասխան պայմանագրերի սպասարկումը: Ինչ վերաբերում է լիցենզիա չունենալուն, ապա ՀՀ օրենսդրության համաձայն, բժշկական հաստատությունը առանց համապատասխան լիցենզիայի բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ տրամադրելու դեպքում ենթակա է օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության և, ըստ այդմ, իրավունք չունի մատուցել այդ ծառայությունները և, առավել ևս, դրանց հատուցման համար դիմել Հիմնադրամին:	
4.	Հռիփսիմե Հունանյան	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** խմբագրել նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝ «քաղաքացի և ռեզիդենտ» բառերը փոխարինել «քաղաքացի, ռեզիդենտ և» բառերով»	Ընդունվել է, հաջորդող կետերում ևս կատարվել են համապատասխան խմբագրումներ:	**Ընդունվել է:**

	ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ				
5.	ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** խմբագրել նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝ «մինչև 18 տարեկան երեխաները,» բառերից հետո «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պականող 18-23» բառերը փոխարինել «18-23 տարեկան առկա ուսուցմամբ սովորողների» բառերով: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Շահառուների ցանկում նախատեսել նաև առկա ուսուցմամբ ուսանողներին:	**Չի ընդունվել, քանի որ** առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պականող 18-23 տարեկանների բժշկական օգնությունն ու սպասարկումը երաշխավորվում է օրենքով՝ առանց ուսուցում անցնելու պայմանի, ինչ վերաբերում է առկա ուսուցմամբ ուսանողներին, ապա նրանք չեն նախատեսվել նախագծում հաշվի առնելով ԱՀԱ համակարգի համար նախատեսված բյուջետային հատկացումների նախատեսվող չափը: Այդուհանդերձ, կետում կետադրությունը շտկված է:	**Ընդունվել է:**
6.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ տալ պարզաբանում՝** նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով սահմանված «գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողների» ապահովագրվճար վճարելու կարգը:	Այդ խմբի կողմից ապահովագրավճարների վճարման կարգը սահմանված է հոդված 14-ում:	**Ընդունվել է:**
7.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ տալ պարզաբանում՝** նախագծի 14-րդ հոդվածում նախագծի շրջանառության մեջ դրվելուց հետո հետևյալ դրույթի՝ «12.Հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) վճարած ապահովագրավճարը, որպես սոցիալական ծախս փոխհատուցվում (վերադարձվում) է **եկամտային հարկի գումարից** Կառավարության կողմից սահմանված կարգով և չափով՝ հիմք ընդունելով անձի սույն օրենքի	Նշված մասը հանվել է Ֆինանսների նախարարության առաջարկով:	**Ընդունվել է:**

	հանձնաժողովի նախագահ		իմաստով տարեկան եկամտի չափն ըստ վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված եկամտային հարկի տարեկան հաշվարկի հայտարարագրի:» **բացակայության մասին հարցը:**		
8.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** նախագծի 28-րդ հոդվածում հիմնադրամի իրավասությունների մեջ նախատեսել պատասխանատվության մեխանիզմներ բժշկական կազմակերպությունների և դեղատների համար՝ Հիմնադրամի հետ կնքված պայմանգրերի չկատարման դեպքերում:	Պայմանագրերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասով պատասխանատվության դրույթները սահմանվելու են պայմանագրերով, որոնց օրինակելի ձևերը, համաձայն նախագծի 19-րդ հոդվածի 5-րդ մասի, սահմանելու է Կառավարությունը:	**Ընդունվել է:**
9.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** նախագծի 38-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով «3) Կառավարությունը, օրենքով սահմանված կարգով, պետական բյուջեի նախագծի հետ Ազգային Ժողովին է ներկայացնում Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշիվը:»:	Առաջարկը չի բխում նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներից, ըստ որի Հիմնադրամի բյուջեի նախագիծը հոգաբարձուների խորհրդի կողմից համաձայնեցվում է կառավարության հետ, մինչև դրա հաստատումը:	**Ընդունվել է:**
10.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝ պարզաբանել և հստակեցնել** նախագծի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում արձանագրված **«չնշված»** հասկացության իմաստը: Ենթադրաբար, դրանք այն շահառուներն են որոնք ստանում են **մինչև** 200.001 դրամ աշխատավարձ, 63-65 տարեկան կենսաթոշակառուներ են և 18-23 տարեկան առկա ուսուցմամբ ուսանողներ:	Չնշված հասկացությունը վերաբերվում է վարձու աշխատողներին, որոնց աշխատավարձը չի գերազանցում 200.000 դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին և նոտարներին, որոնց իրացման շրջանառությունը չի գերազանցում 2.400.000 դրամը	**Ընդունվել է:**
11.	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ պարզաբանել՝** «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքն ընդունվելուց հետո «սոցփաթեթի» իրավունք ունեցողների հետ կապված հարցերը, ելնելով նրանից, որ 2026 թվականի բյուջեի նախագծում	**Սոցիալական փաթեթի** 200.001 դրամ և ավել աշխատավարձ ստացող **շահառուները կապահովագրվե, իսկ**	**Ընդունվել է:**

	մշտական հանձնաժողովի նախագահ		համապատասխան ծրագրում, նախկինում 10 մլրդ դրամ նախատեսելու փոխարեն, նախատեսվել է 2 մլրդ դրամ:	**մինչև** 200.001 դրամ աշխատավարձ ստացողները կշարունակեն ստանալ ծառայություններ՝ նախկինում գործող առողջապահական բաղադրիչում ներառված ծառայությունների շրջանակներում:	
12	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** շտկել նախագծում առկա հետևյալ բովանդակային հարցը. Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասում արձանագրվում է, որ «Հիմնադրամը ստեղծվում է և դրա կանոնադրությունը հաստատվում է Կառավարության որոշմամբ», մինչդեռ նախագծի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում նշվում է, որ «Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումները ընդունում է» հիմնադրամը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Եթե կանոնադրությունը հաստատվելու է Կառավարության կողմից, ապա նրանում փոփոխությունները նույնպես պետք է հաստատվեն Կառավարության որոշմամբ:	Սույն կարգավորումը բխում է «Հիմնադրամների մասին» օրենքից, որը կանոնադրության հաստատումը վերապահում է հիմնադրին, իսկ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում հետագա փոփոխությունները և լրացումների իրականացումը պատվիրակում հոգաբարձուների խորհրդին:	**Ընդունվել է:**
13	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** կատարել նախագծում առկա հետևյալ տեխնիկական շտկումները, որոնք բխում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքից. 1. Նախագծի նպատակը վերնագրում շարադրել (այսուհետ՝ օրենք) բառերը և հաջորդ պարբերությունում հանել այդ բառերը: 2. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում հանել «Հայաստանի Հանրապետություն» բառերը: 3. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «երկրորդ համաշխարհային» բառերը փոխարինել Հայրենական մեծ» բառերով: 4. Նախագծի 14-րդ հոդվածում վերանայել 12-րդ մասի համարակալումը: 5. Նախագծի 15-րդ հոդվածում վերանայել 15-րդ մասի 3-ից 8-րդ կետերի համարակալումը: 6. Նախագծի 45-րդ հոդվածի վերնագիրը «Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետները» փոխարինել «Եզրափակիչ մաս» վերնագրով:	1.(այսուհետ՝ օրենք) բառերի կիրառումը վերնագրում նպատակահարմար չէ, ուստի կիրառվել է առաջին անգամ տեքստում հիշատակվելուց հետո: 2.Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 3.Ընդունվել է: Տերմինաբանությունը	**Ընդունվել է:**

			7. Նախագծի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում վերանայել «սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում» բառերը: 8. Նախագծի 46-րդ հոդվածի 10-րդ մասում «ենթաօրենսդրական ակտերը» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը» բառերով:	համապատասխանեցվել է օրենսդրության մեջ կիրառվող եզրույթներին: 4. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 5. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 6. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 7. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 8.Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
14	Հռիփսիմե Հունանյան ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ՝** նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16-րդ կետով. «16) քառօրյա և 44-օրյա պատերազմում զոհված և անհետ կորած զինծառայողների ծնողներ. **Առաջարկում եմ՝** նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «9-13-րդ» բառերից հետո ավելացնել «16-րդ» բառը: **Առաջարկում եմ՝** նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերում «10-րդ» բառից հետո ավելացնել «և 16-րդ» բառը: **Առաջարկում եմ՝** նախագծի 45-րդ հոդվածի 1-ին մասի «և 10-րդ» բառերը փոխարինել «10-րդ և 16-րդ» բառերով	Ընդունվել է: Սակայն լրացվել է այլ, ավելի ընդգրկուն խմբագրությամբ և մեկ կետում, համարակալման և հղումների ընդհանուր մոտեցումները չխախտելու նպատակով:	**Ընդունվել է:**
15	Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 11-րդ հոդված 2-րդ մաս, 1-ին, 2-րդ կետեր	1.Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած 18-23 տարեկան երեխաները, միակողմանի ծնողազուրկ 18-23 և երկկողմանի ծնողազուրկ մինչև 26 տարեկան առկա (ստացոինար) ուսուցմամբ սովորող անձինք: 2.«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետը հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի	Առաջարկներն ընդունելի են, սակայն մկատի ունենալով, որ 2026 թվականի պետական բյուջեն արդեն իսկ ընդունվել է, որում ԱՀԱ ծախսերը հաշվարկված են ըստ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի, ներկայացված առաջարկին հնարավոր է անդրադառնալ միայն 2027 թվականի պետական բյուջեի	**Ընդունվել է:**

			Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ 63 և բարձր տարիքի անձինք:	քննարկումների համատեքստում:	
16	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 2-րդ հոդված	1.Առաջարկվում է հոդվածից և ամբողջ տեքստից հանել բժշկական պարագաների մասին կարգավարումները՝ հաշվի առնելով դրանց ցանկի սահմանման, ինչպես և գների կարգավորման հետ կապված առկա ներկայում դեռևս չլուծված խնդիրները: Ինչպես նաև հոդվածը լրացնել նոր հասկացությամբ՝ գյուղաղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողների մասով, ինչը կբացառի այդ խմբի մասով օրենքի դրույթների տարընկալումը 2.1-ին մասի 8-րդ կետում «բժշկական կազմակերպություն» բառերը փոխարինել «բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող» բառերով՝ հաշվի առնելով ոլորտային օրենսդրության և նախագծում կիրառվող տերմինները: 3.վերանայել բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ և լրացուցիչ ծառայությունները՝ դրանք սահմանելով ՀՀ քաղաքացիների համար, հստակեցնել լրացուցիչ ծառայությունները սահմանող հասկացությունը: 4.խմբագրական շտկման ենթարկել 1-ին մասի 30-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ» հասկացությունը. 5.շտկել, վերացնել հասկացություններում առկա վրիպակները	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
17	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 3-րդ հոդված	Հոդվածը լրացնել ապահովագրված անձի՝ կամավոր ապահովագրության շրջանակում հատուցում ստանալու իրավունքի վերաբերյալ դրույթով	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
18	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 5-րդ հոդված, 4-րդ մաս	հանել ցանկ սահմանելու վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարին լիազորություն տալու դրույթները, հաշվի առնելով, որ շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները, ի թիվս այլ ծառայությունների, սահմանվելու են կառավարության որոշմամբ		**Ընդունվել է:**
19	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 6-րդ հոդված	Լրացնել ԱՀԱ վկայագրի մեջ ներառվող տվյալների ցանկը՝ ավելացնել անձի ՀԾՀ տվյալները, անձի լուսանկարը, ինչպես խմբագրվել են առանձին ձևակերպումներ, լրացվել պլաստիկ քարտի տրամադրմանը վերաբերող լիազորող նորմերը	Ընդունվել է.	**Ընդունվել է:**
20	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 8-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին կետ, 9-րդ մաս, 10-րդ հոդվա, 4-րդ մաս	Առաջարկվում է հանել «սանիտարական ավիացիա» հասկացությունը՝ օրենքի դրույթների տարընկալումը բացառելու նպատակով, վերանայվել և փոփոխել է համավճարի սահմանման շեմը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

			առաջարկվում է վերանայել դեղերի հաւոուցման առավելագույն գնի կրկնակին ունեցող դեղերի հատուցման հետ կապված հարաբերությունները, սահմանելով դրա չհատուցման պահանջ:		
21	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 12-րդ հոդված, 6-րդ մաս, 8-րդ, 9-րդ մասեր	Հստակեցնել ապահովագրված անձանց կարգավիճակի դադարման հիմքերը, ժամկետները, լրացնել նոր մաս կարգավիճակի վավերացման մասով և այդ կապակցությամբ փոփոխել մասերի համարակալումը և փոփոխված 9-րդ մասում «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
22	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 14-րդ հոդված 1-ին մաս, 2-րդ կետ, 4-րդ, 7-րդ մասեր	Ապահովագրավճարների հաշվարկման բազաների, առանձին կատեգորիաների ապահովագրված անձանց ապահովագրավճարների վճարների վճարման ժամկետների հստակեցում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
23	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 14-րդ հոդված	1.Հանել 4-րդ մասը, այդ կապակցությամբ վերանայելով համարակալումը, նոր համարակալված 4-րդ մասում սահմանել դրույթներ նախորդ հաշվետու ժամանակահատվածում ճշտված հաշվարկների՝ ապահովագրված անձի կարգավիճակի վրա չազդելու վերաբերյալ, 7-րդ մասում սահմանել դրույթներ Գանձապետական հաշվին կատարված վճարումները ծախս ձևակերպելու վերաբերյալ, 10-րդ մասից հանել «կամ դրան հավասարեցված այլ վճարումներ» բառերը, 11-րդ մասում սահմանել ապահովագրավճարների չվճարման հիմքով տույժերի կատարման, ինչպես նաև հարկադիր կատարման հետ կապված կարգավորումներ, 14-րդ կետի 6-րդ մասից հանել «լրացուցիչ» բառերը: Պայմանավորված առանձին կատեգորիայի աշխատողների տվյալների բացահայտման անհնարինությամբ, նրանց մասով ապահովագրավճարների վճարման առանձնահատկություններ սահմանելու մասով կարգ ընդունելու համար կառավարությանը լիազորություն տալու դրույթ լրացնել: 2.Խմբագրել 10-րդ մասը՝ հանելով լրացուցիչ կարգավորում չպահանջող հարաբերությունների լիազորող դրույթները: 3.Շտկել համարակալումը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
24	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 15-րդ հոդված	1:Առողջության համընդհանուր ապահովագրավճար վճարողների կողմից ապահովագրավճարների հաշվարկման, հաշվառման և փոխանցման (գանձելու) պարտավորությունների հստակեցման, տարընկալման բացառման նպատակով արված խմբագրումներ, մասերում արված հղումների թվերը ուղղել	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
25	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 16-րդ հոդվածի 1-ին մաս	2.Ապահովագրավճար վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտների պատասխանատվության մասով դրույթների հստակեցում	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

			3.Հանել 16-րդ մասը՝ լրացուցիչ կարգավորում չպահանջող հարաբերությունների լիազորող դրույթներով նախագիծը չծանրաբեռնելու նպատակով:		
26	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 17-րդ հոդվածի 3-րդ մաս	Հստակեցնել բոնուսային միավորների օգտագործման դեպքերը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
27	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 19-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասեր8	Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, Հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերից հանել առանձին պարտադիր դրույթներ՝ դրանք թողնելով ենթաօրենսդրական ակտերով կարգավորմանը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 21-րդ հոդվածի 2-րդ մաս, 1-ին կետ	Խմբագրել կետը՝ հանելով լրացուցիչ կարգավորում չպահանջող հարաբերությունների լիազորող դրույթները	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
28	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 22-րդ հոդվածի 2-րդ մաս	Խմբագրել մասը՝ ընդլայնելով ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Հիմնադրամի կողմից ծանուցվող սուբյեկտների շրջանակը, հանել լրացուցիչ կարգավորում չպահանջող հարաբերությունների լիազորող դրույթները:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
29	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 25-րդ հոդվածի 2-րդ մաս, 1-ին կետ	Վերանայել կետով սահմանված սուբյեկտների շրջանակը՝ առանց անձի համաձայնության տեղեկություններ ստանալու իրավունք ունեցող անձնաց շրջանակում ներառելով ապահովագրական ընկերություններին՝ հատուցման հետ կապված գործընթացները պատշաճ կամակերպելու նպատալով.	Ընդունվել է	**Ընդունվել է:**
30	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 27-րդ, 30-րդ, 31 հոդված,	30-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության տեղափոխել 2-րդ մաս, հոդվածի համարակալումը շտկում, 10-րդ մասի 17-րդ մասը տեղափոխել 27-րդ հոդված 31-րդ հոդվածի 4-րդ մասի վրիպակը շտկել	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
31	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 32-րդ հոդված	Լրացնել 32-րդ հոդվածի վերնագիրը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
32	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, 38-րդ հոդվածի 3-րդ մաս, 39-42-րդ հոդվածներ	1.Շտկվել է հղումը, 2.Հստակեցնել Ապահովագրված անձի և Հիմնադրամի միջև ծագած մասնավոր բնույթի այն վեճերը քննող հիմնադրամի մարմնին	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
33	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 43-րդ հոդված	Ծանուցման ընթացակարգերը համապատասխանեցնել «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի պահանջներին	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
34	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 45-րդ, 46-րդ հոդվածեր	1.Վերանայել համարակալումը 2.Լրացնել ԱՀԱ համակարգում առկա առանձին խնդիրներով պայմանավորված անցումային կարգավորումներով (վարձու աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց կողմից 2026	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

			թվականի ընթացքում ապահովագրավճար վճարելու և դրա հետվերադարձի, 2026 թվականի ընթացքում ապահովագավճարների մասնակի հատուցման մասին դրույթներ), ինչպես նաև հստակեցնել ապահովագրավճարի՝ անցումային շրջանում հաշվարկման և վճարման կարգի առանձնահատկությունները 3.Հստակեցնել նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մասի 16–րդ հոդվածի ուժի մեջ մտնելու ժամկետները 4.Հստակեցնել 46-րդ հոդվածի 9-րդ, 11-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ 20-րդ մասերի կարգավորումները՝ դրանց պատշաճ կիրարման համար, վերացնել առանձին վրիպակներ		
35	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	Վերանայել և շտկել օրենսդրական տեխնիկայի կանոններին չհամապատասխանող դրույթներ (համարակալումներ, հղումներ)	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
36	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծ 46 հոդված	Նկատի ունենալով աշխատանքների ծավալը, սահմանել ԱՀԱ հիմնադրամի ժամանակավոր խորհրդի գործունեության 6 ամսյա ժամկետ	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
37	ՀՀ կառավարություն	Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի հարակից փաթեթում ընդգրկված նախագծեր	Նախագծերում օրենքների հրապարակման ժամկետները համապատասխանեցվել են Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագծով սահմանված ժամկետին	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
38	ՀՀ կառավարություն	Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին»	Լ1-ին հոդվածում սահմանել նաև ժամանակավոր խորհրդի հետ ձևավորման և գործունեության ժամկետների հետ կապված առանձնահատկությունը	Ընդունվել է	**Ընդունվել է:**
39	ՀՀ կառավարություն	«Դեղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ հոդված 1, 3, 4, 5	Նախագծի 1-ին հոդվածի դրույթները խմբագրվել են՝ օրենքում սահմանելով «ապահովագրական փաթեթում ներառված դեղ» հասկացությունը և գնային հասկացությունները՝ «փոխհատուցվող դեղեր» հասկացության և գնային հասկացությունների հետ զուգահեռ: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեղերի մատչելիության ապահովման պետական համակարգը ներառում է ոչ միայն ապահովագրական փաթեթի շրջանակում ապահովագրված անձանց կողմից դեղերի ձեռք բերման՝ ամբողջությամբ կամ մասնակի (համավճար) հատուցումը, այլ նաև շարունակելու է գործել ՀՀ օրենսդրությամբ սահմանված շահառուներին պետության կողմից իրականացվող առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում դեղերով ապահովումը և նրանց համար *դեղերի արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:*	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

			Նախագծից հանել օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու մասին դրույթը, ներկայում դրա գործելու անհրաժեշտությամբ պայմանավորված, բժշկական պարագաների հետ կապված կարգավորումները: 4-րդ հոդվածով լրավող 11-րդ հոդվածում կատարել «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագծին անհրաժեշտ համապատասխանեցումներ		
40	ՀՀ կառավարություն	«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» լրացում և փոփոխություն կատարելու մասին» նախագիծ, հոդված 1	հստակեցվել է դոնորների համար բոնուսների կիրառման հտե կապված դրույթը		**Ընդունվել է:**
41	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծ, հոդվածներ 5,6 7, 8	հստակեցվել են ԱՀԱ օրենսդրության կարգավորումների շրջանակում բժշկական օգնության և սպասարկման իրավունքի իրացման հետ կապված կարգավորումները	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
42	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագիծ, հոդված 4	Հանել բժշկական պարագաներին վերաբերող ձևակերպումները, ուղղել համարակալումը, ուղղված 3-րդ մասում ավելացնել «սույն» բառը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
43	ՀՀ կառավարություն	«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1, 2, 3	1-ին, 2-րդ հոդվածներում սահմանել, որ թմրամոլության հիվանդների հետ կապված բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվելու է Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի և Առողջության համընդհանուր ապահովագրության ապահովագրության մասին» օրենքի կարգավորումների շրջանակներում՝ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համապատասխան դրույթներում 3-րդ հոդվածը հանել, քանի որ ուղղակիորեն չի առնչվում ներկայացված փաթեթին:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
44	ՀՀ կառավարություն	«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդվածներ 2,3	Սահմանել, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ և օժանդակ սերմնավորման հետ բժշկական օգնության և սպասարկման կարգը, հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվելու է Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի և Առողջության համընդհանուր ապահովագրության ապահովագրության մասին» օրենքի կարգավորումների շրջանակներում՝ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համապատասխան դրույթներում	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

45	ՀՀ կառավարություն	«Հոգեբուժական օգնության եվ սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Սահմանել, որ հոգեբուժական բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվելու է Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի և Առողջության համընդհանուր ապահովագրության ապահովագրության մասին» օրենքի կարգավորումների շրջանակներում՝ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համապատասխան դրույթներում	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
46	ՀՀ կառավարություն	«Հաշտարարության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Ուղղել լրացվող հոդվածի համարը, մասը, սահմանել պարտադիր հաշտարարության ենթակա վեճերի շրջանակը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
47	ՀՀ կառավարություն	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 4	Ուղղել համարակալումը	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
48	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետները վերանայել դրոշմանիշային վճարների դրույքաչափերը նվազեցնելու կարգավորումը 2025 թվականի դեկտեմբերի 1-ից կիրառելու նպատակով, բացառությամբ այն խմբերի, ում համար ԱՀԱ համակարգին միանալը պարտադիր է դառնում 2026 թվականի հունվարի 1-ից, որոնց համար սույն նախագիծը ուժի մեջ կմտնի ևս այդ ժամկետում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
49	ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 1-ին հոդված	1-ին հոդվածում «օրենքի» բառից հետո լրացնել «կարգավորումների» տարընկալման բացառման նպատակով	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
50	ՀՀ կառավարություն	**«**Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1, 3	1-ին հոդվածում շտկել է նախաբանի վրիպակը, 1-ին և 3-րդ հոդվածում հստակեցվել ապահովագրավճարի անվանումը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
51.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և	Ընդունվել է	**Ընդունվել է:**

		բժշկական օգնության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, 2-րդ, 4-րդ հոդվածներում, «Դեղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, 2-րդ հոդվածներում, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի հոդված 1-ում, «Հաշտարարության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում, «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներում, «Բնակչության բժշկական օգնության ասպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում	փոխներարկումային բժշկական օգնության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, 2-րդ, 4-րդ հոդվածներում, «Դեղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, 2-րդ հոդվածներում, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի հոդված 1-ում, «Հաշտարարության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում, «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներում, «Բնակչության բժշկական օգնության ասպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխանություն ապահովելու նպատակով կատարել տեխնիկական բնույթի փոփոխություններ		